ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ------- 2025 թվականի № ----Ա

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՈՒԳԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2011 թվականի սեպտեմբերի 7-ի №414Ն որոշմամբ հաստատված՝ հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման մեջ գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների կողմից այլ օպերատորներին հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման կանոնների 17-րդ կետի 2-րդ ենթակետի և 19-րդ կետի կարգավորումների համաձայն՝ գերիշխող օպերատորը իրավասու է մերժել օպերատորի դիմումը, եթե Հանձնաժողովին ապացուցի, որ խողովակների ազատ թողունակությունը կսպառվի դիմումն ստանալու օրվանից հետո 3 տարվա ընթացքում՝ ներկայացնելով հիմքեր առ այն, որ օպերատորի կողմից ենթակառուցվածքի պահանջված հատվածում ազատ թողունակությունը կսպառվի իր կարիքների համար դիմումի ամսաթվից հետո 3 տարվա ընթացքում,

բ) Հանձնաժողովն իր 2021 թվականի նոյեմբերի 3-ի №393-Ա որոշման համաձայն՝ ընդունել է «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից «Վիվա Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության՝ հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման դիմումի մերժման բավարար հիմքերի առկայությունը և թույլատրել է Ընկերությանը մերժել դիմումն այն խողովակաշարերի մասով, որոնք վերջինս նախատեսում է օգտագործել դիմումն ստանալու օրվանից հետո 3 տարվա ընթացքում,

գ) Հանձնաժողովի 2022 թվականի մայիսի 20-ի №215-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն՝ Ընկերությունը պետք է մինչև

2022 թվականի հուլիսի 1-ը Հանձնաժողով ներկայացներ Հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 3-ի №393-Ա որոշմամբ նշված՝ մինչև 10 խողովակ ունեցող մայրուղային խողովակաշարերի՝ «Վիվա Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից հայցվող խնդրո առարկա հատվածները ներառող օպտիկամանրաթելային ցանցի զարգացման ծրագիր-ժամանակացույց՝ մինչև 2024 թվականի սեպտեմբերի 28-ը ժամանակահատվածի համար, իսկ ծրագիր-ժամանակացույցում փոփոխություններ կատարելու դեպքում՝ դրանք նախապես ներկայացներ Հանձնաժողով՝ համապատասխան հիմնավորումներով,

դ) Որոշման 2-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ Ընկերությունը պետք է մինչև 2024 թվականի հոկտեմբերի 15-ը Հանձնաժողով ներկայացներ տեղեկատվություն՝ Հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 3-ի №393-Ա որոշմամբ նշված մինչև 10 խողովակ ունեցող մայրուղային խողովակաշարերի՝ «Վիվա Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից հայցվող խնդրո առարկա հատվածները մինչև 2024 թվականի սեպտեմբերի 28-ը սպառված լինելու վերաբերյալ՝ համապատասխան հիմնավորումներով, և մինչև նշված ժամկետում խողովակաշարերի խնդրո առարկա նշված հատվածները չսպառելը կարող է դիտվել որպես Ընկերության կողմից Հանձնաժողովին ոչ հավաստի տեղեկատվության ներկայացում,

ե) Հանձնաժողովի 2023 թվականի օգոստոսի 2-ի №277-Ա որոշման հավելվածի՝ Ընկերությանը 1995 թվականի փետրվարի 27-ին տրամադրված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործման) №60 լիցենզիայի (այսուհետ՝ Լիցենզիա) պայմանների 20-րդ և 25-րդ կետերի համաձայն՝ Ընկերությունը Հանձնաժողովի պահանջով պարտավոր է ներկայացնել լիցենզավորված գործունեությանն առնչվող տեղեկատվություն և պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար,

զ) Որոշման 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն՝ Ընկերության կողմից 2022 թվականի հուլիսի 13-ին, 22-ին, դեկտեմբերի 26-ին, 30-ին և 2023 թվականի դեկտեմբերի 27-ին Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվությամբ (օպտիկամանրաթելային ցանցի զարգացման ծրագիր-ժամանակացույց) Աջափնյակ վարչական շրջանում օպտիկամանրաթելային ցանցի կառուցման աշխատանքների վերջնաժամկետ է նշվել 2024 թվականի սեպտեմբերի 1-ը,

է) Որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Ընկերության 2024 թվականի հոկտեմբերի 15-ի №1997/24-1 գրությամբ ներկայացված տեղեկատվությամբ նշվում է, որ խողովակաշարերի խնդրո առարկա հատվածները նախորդ 3 տարիների ընթացքում զգալի մեծամասնությամբ զբաղեցվել են Ընկերության օպտիկամանրաթելային մալուխային հասանելիության ցանցի և տվյալների կենտրոնները միմյանց կապող օպտիկամանրաթելային մալուխային օղակի կառուցման նպատակով՝ դրանցում անցկացված մալուխներով և «microduct» տիպի մալուխային ենթակառուցվածքներով, բացի Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանում գտնվող ենթակառուցվածքները և տվյալ վարչական շրջանի տվյալների կենտրոնը մյուս վարչական շրջաններում գտնվող ընկերության տվյալների կենտրոններին կապող ենթակառուցվածքներից, քանի որ Աջափնյակ վարչական շրջանում ծրագրված օպտիկամանրաթելային ցանցի կառուցումը հետաձգվել է Երևանի քաղաքապետարանի կողմից ցանցի կառուցման համար անհրաժեշտ մալուխային բաշխիչ պահարանների տեղակայման վայրերի համաձայնեցման ուշացմամբ պայմանավորված (այդ նպատակով Երևանի քաղաքապետարանին ուղղված Ընկերության 2024 թվականի մարտի 28-ի գրության պատասխանը քաղաքապետարանից ստացվել է 2024 թվականի օգոստոսի 28-ին),

ը) Որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջների կատարման ուսումնասիրության նպատակով Հանձնաժողովի 2024 թվականի նոյեմբերի 13-ի №ՍՇ/34.2-Մ2-2/5344-2024 գրությամբ Ընկերությունից պահանջվող՝ խնդրո առարկա ենթակառուցվածքների վերաբերյալ 2024 թվականի սեպտեմբերի 28-ի դրությամբ առկա տեղեկատվության առնչությամբ Ընկերության 2024 թվականի նոյեմբերի 22-ի №2283/24-1 գրությամբ տրամադրված տեղեկատվությամբ նշվել է, որ տվյալ ենթակառուցվածքներն ամբողջովին կամ զբաղված են, կամ վթարված են և նրանցում լրացուցիչ մալուխներ անցկացնելու հնարավորություն չկա և կից ներկայացվել է այդ ենթակառուցվածքների դիտահորերի անձնագրերը, որոնց համաձայն՝ որպես Ընկերության խողովակաշարերի խնդրո առարկա զբաղեցված հատվածներ ներառված էին նաև №№136, 304/5, 523 դիտահորերում առկա խողովակները, իսկ որոշ՝ ներառյալ №137 և №501 դիտահորերում առկա էին ազատ խողովակների նշումներ,

թ) Հանձնաժողովի 2024 թվականի դեկտեմբերի 20-ի №ՍՇ/34.2-Մ2-2/5973-2024 գրությամբ Ընկերությունից պահանջվող՝ խնդրո առարկա ենթակառուցվածքների՝ ներառյալ №137 և №501 դիտահորերում առկա ազատ հատվածների նշումների վերաբերյալ պարզաբանումների առնչությամբ Ընկերության 2024 թվականի դեկտեմբերի

27-ի №2521/24-1 գրությամբ տրամադրված տեղեկատվությամբ նշվել է, որ №137 դիտահորում առկա խողովակները փաստացի զբաղված են (կից տրամադրվել է նաև դիտահորի անձնագիրը), իսկ №501 դիտահորում առկա ազատ խողովակները Որոշմամբ նշված՝ խնդրո առարկա ուղղության վրա չեն գտնվում,

ժ) Հանձնաժողովի 2025 թվականի փետրվարի 11-ի №ՍՇ/34.2-Մ2-2/566-2025 գրությամբ Ընկերությունից պահանջվել է ներկայացնել՝ Աջափնյակ վարչական շրջանում գտնվող ենթակառուցվածքները մինչև 2024 թվականի սեպտեմբերի 28-ը սպառված չլինելու վերաբերյալ պարզաբանումներ (ներառյալ՝ Ընկերության №1997/24-1 գրությանը կից փաստաթղթերում նշված՝ թվով 120 բաշխիչ պահարանների հասցեների վերաբերյալ տեղեկություններ), ինչպես նաև համապատասխան ցանկում նշված խողովակաշարերի թողունակությունը մինչև 2024 թվականի սեպտեմբերի 28-ը Ընկերության սեփական կարիքների համար սպառված լինելու վերաբերյալ մանրամասն հիմնավորումներ,

ժա) Ընկերության 2025 թվականի մարտի 27-ի №627/25-1 գրությամբ տրամադրված տեղեկատվությամբ նշվել է, որ Աջափնյակ վարչական շրջանում գտնվող խնդրո առարկա ենթակառուցվածքները 2024 թվականի սեպտեմբերի 28-ի դրությամբ զբաղեցված են Ընկերության օպտիկամանրաթելային (FTTH) ցանցի «microduct» տիպի խողովակներով, որոնցում դեռևս տեղակայված չէին օպտիկամանրաթելային մալուխները, քանի որ, Երևանի քաղաքապետարանի կողմից չեն տրամադրվել ցանցի կառուցման համար անհրաժշտ բաշխիչ պահարանների տեղադրման շինարարական թույլտվությունները: Ընկերությունը ներկայացրել է նաև խնդրո առարկա ենթակառուցվածքների զբաղվածության վերաբերյալ իրականացված առաջյա ուսումնասիրությունների արդյունքները, ի թիվս որոնց նշվել է, որ №304/3 դիտահորից մինչև №304/5 դիտահոր, №523 դիտահորից մինչև №517/1 դիտահոր ընկած հատվածներում 2024 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում ազատվել են 1 և ավել խողովակներ, №136 դիտահորից մինչև №137 դիտահոր ընկած հատվածում 25 մետր երկարությամբ հատվածի խողովակաշարի բոլոր 8 և №501 դիտահորից մինչև №502 դիտահոր ընկած հատվածի խողովակաշարի բոլոր 4 խողովակները վնասված են,

ժբ) Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2025 թվականի հուլիսի 17-ի №605-ԳՔ հրամանի համաձայն՝ 2025 թվականի հուլիսի 22-24-ը Հանձնաժողովի և Ընկերության աշխատակիցների համատեղ իրականացված՝ Ընկերության հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակաշարերի տեղազննման արդյունքներով (որն Ընկերությանն էր ուղարկվել Հանձնաժողովի 2025 թվականի օգոստոսի 15-ի №ՍՇ34.2-Մ2-2/4271-2025

գրությամբ) Որոշմամբ նշված՝ խնդրո առարկա խողովակաշարերի Աջափնյակ վարչական շրջանում գտնվող հատվածներում, ինչպես նաև այլ վարչական շրջաններում գտնվող խնդրո առարկա մի շարք խողովակաշարերում (№136 և №137, №304/5, №501 դիտահորերում առկա համապատասխանաբար 8-ական, 3 և 4 խողովակներից ամբողջությամբ ազատ են երկուական, իսկ №523 դիտահորում առկա 6 խողովակներից՝ մեկը, որոնցից վնասված են №304/5 դիտահորում և №523 դիտահորում առկա ազատ խողովակները) առկա են ազատ խողովակներ,

ժգ) Ընկերության 2025 թվականի օգոստոսի 21-ի №2061/25-1 գրությամբ տրամադրված տեղեկատվությամբ նշվել է, որ №304/5 և №523 դիտահորերում առկա՝ համապատասխանաբար 2 և 1 ազատ խողովակները վնասված են, իսկ №136 և №137 դիտահորերի միջև ընկած խողովակաշարի հատվածը, որն ավելի քան 3 տարի եղել է ավիրված, ինչպես նաև №501 և №502 դիտահորերի միջև ընկած խողովակաշարի բոլոր 4 վթարված խողովակները վերականգնվել են Ընկերության ենթակառուցվածքի վթարավերականգնողական աշխատանքների արդյունքում՝ 2025 թվականի հուլիս ամսին,

ժդ) Լիցենզիայի պահանջների (Լիցենզիայի պայմանների 20-րդ և 25-րդ կետեր) հնարավոր խախտման ուսումնասիրության նպատակով Հանձնաժողովը Ընկերության նկատմամբ 2025 թվականի սեպտեմբերի 15-ին հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 15-ի №ՄՄ/34.2-Մ2-2/5058-2025 գրությամբ: Նույն գրությամբ Ընկերությունը տեղեկացվել է նաև «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վարչական վարույթի մասնակցի լսված լինելու իրավունքն ապահովելու նպատակով, գրությունը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում վարույթում քննարկվող հարցերի վերաբերյալ դիրքորոշում և համապատասխան հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու անհրաժեշտության մասին,

ժե) Ընկերությունը վարչական վարույթի շրջանակում քննարկվող հարցի վերաբերյալ իր 2025 թվականի սեպտեմբերի 29-ի №2378/25-1 գրությամբ նշել է, որ Հանձնաժողովին ոչ հավաստի տեղեկատվություն չի ներկայացրել: Ստորգետնյա մալուխային կոյուղային խողովակաշարերի 3 տարիների ընթացքում Ընկերության սեփական հեռահաղորդակցության ցանցի ընդլայնման արդյունքում զբաղեցվելու վերաբերյալ 2022 թվականին տրամադրված տեղեկատվությունը հիմնված է եղել Ընկերության ցանցի զարգացման պլանների, ընթացիկ և այդ պահի դրությամբ դեռևս

նախատեսվող նախագծերի վրա: Խնդրո առարկա խողովակաշարերի զգալի մասի զբաղվածության վերաբերյալ Հանձնաժողովին բազմիցս տեղեկացվել է և առաջյա՝ տեղում Հանձնաժողովի և Ընկերության ներկայացուցիչների մասնակցությամբ կատարված համատեղ ուսումնասիրությունների՝ տեղազանման արդյունքներով հավաստվել և 3 տարիների ընթացքում չեն զբաղեցվել միայն Աջափնյակ վարչական շրջանում գտնվող որոշ հատվածներ, ինչը Աջափնյակ վարչական շրջանում Ընկերության ցանցի կառուցման նախագծի ի սկզբանե նախատեսված ժամկետներում իրականացման անհնարինության՝ ցանցի կառուցման համար անհրաժեշտ բաշխիչ պահարանների տեղադրման վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի կողմից համաձայնությունների և շինարարական թույլտվությունների ուշացման հետևանք է: Ըստ Ընկերության, վերջինիս կողմից ձեռնարկվել են իր իրավասությունների և պարտականությունների շրջանակում ներառվող բոլոր հնարավոր և ողջամիտ գործողությունները 2022 թվականին տրամադրված տեղեկատվությամբ նախանշված ծրագրերն իրականացնելու ուղղությամբ: Մասնավորապես՝ Աջափնյակ վարչական շրջանում ցանցի կառուցման համար անհրաժեշտ բաշխիչ պահարանների տեղադրման համար անհրաժեշտ տեղազննությանը մասնակից ներկայացուցիչ տրամադրելու խնդրանքով Ընկերությունը №616/24-1 գրությամբ Երևանի քաղաքապետարանին է դիմել 2024 թվականի մարտի 28-ին, որին քաղաքապետարանը №45/141352-24 գրությամբ արձագանքել է միայն 2024 թվականի օգոստոսի 28-ին, այն է՝ դիմումից մոտ 5 ամիս անց, որով առաջարկել է տեղազննություններին մասնակից քաղաքապետարանի ներկայացուցչի տվյալները, որի հետ և Ընկերությունը սկսել է տեղազննությունների և համաձայնեցումների գործընթացը: Ընկերությունը նշել է, որ տեղազննությունների գործընթացը ժամանակատար է, հաշվի առնելով, որ տեղազննության ժամանակ վերհանվում, ճշտվում և հաշվի են առնվում բնակիչների ու համատիրությունների կարծիքը, ստորգետնյա այլ ենթակառուցվածքների առկայությունը, շենքերի և փողոցների էսթետիկ տեսքի հետ կապված, ինչպես նաև այլ, այդ թվում՝ տեխնիկական առանձնահատկությունները: Յուրաքանչյուր պահարանի տեղադրիքի համաձայնեցումը հաճախ պահանջում է բազմաթիվ այցելություններ, բնակիչների հետ բանակցություններ, տեխնիկական ճշգրտումներ և այլն: Տեղազննությունների և համաձայնեցումների գործընթացի ավարտից հետո դրանց արդյունքների հիման վրա կազմվել են նախագծեր, որոնք Ընկերության 2024 թվականի նոյեմբերի 7-ին №2153/24-1 գրությամբ ներկայացվել են Երևանի քաղաքապետարան՝ շինարարական թույլտվությունների տրամադրման խնդրանքով: Նախագծերի

համաձայնեցման վերաբերյալ №45/190202-24 գրությունը Երևանի քաղաքապետարանից ստացվել է 2024 թվականի նոյեմբերի 20-ին, իսկ գրության մեջ նշված պետական տուրքի անդորրագրերի ներկայացման պահանջի կատարման վերաբերյալ №2377/24-1 գրությունը Ընկերությունը ներկայացրել է 2024 թվականի դեկտեմբերի 3-ին: Ընկերությունը նշում է, որ ցավոք, շինարարական թույլտվությունների համար դիմումը համընկել է քաղաքաշինության բնագավառում Երևանի ավագանու կողմից նախաձեռնված փոփոխությունների հետ, որի արդյունքում, առաջին փուլում, ի պատասխան Ընկերության դիմումի, քաղաքապետարանի 2024 թվականի դեկտեմբերի 12-ի №45/202874-24 գրությամբ նշվել է, որ բաշխիչ պահարանների տեղադրման շինարարության (ինժեներական ենթակառուցվածքների ստեղծման) թույլտվությունների տրամադրման հարցը կքննարկվի Երևանի քաղաքապետարանի և Ընկերության միջև կնքված «Քանդման (վթարավերականգնողական) անհետաձգելի (ոչ անհետաձգելի) աշխատանքների կատարման ընթացքում պետությանը կամ համայնքին պատճառվող վնասի վերականգնման մասին» պայմանագրի առկայության դեպքում: Վերոնշյալ պայմանագիրն այդ ժամանակ դեռ գտնվում էր Երևանի ավագանու կողմից մշակման փուլում, դիտարկվեց պայմանագրի մի քանի ձևաչափ և խմբագրություն, վերջ ի վերջո, Երևանի ավագանու կողմից նախաձեռնված փոփոխությունների երկրորդ փուլում քաղաքապետարանի քաղաքաշինության կոմիտեի կողմից ներդրվեց urban.egov.am համակարգը, որի միջոցով դիմումների ներկայացման և պայմանագրի կնքման գործառույթը թվայնացվեց և տեղափոխվեց առցանց հարթակ, ինչից հետո միայն հնարավոր եղավ ստանալ հայցված շինարարության թույլտվությունները: Ընկերությունը նշում է, որ հայցված փաթեթից առաջին, այն է №ՀՇԹ//280-2025 շինարարության թույլտվությունը ստացել է 2025 թվականի մարտի 28-ին, ինչից հետո և սկսվել է Աջափնյակ վարչական շրջանում օպտիկամանրաթելային ցանցի կառուցումը, որը ներկայումս հաջողությամբ ընթանում է: №№136, 137, 304/5, 501 և 523 դիտահորերում ազատ խողովակների առկայության վերաբերյալ Ընկերությունն ըստ էության ներկայացրել է իր 2025 թվականի օգոստոսի 21-ի №2061/25-1 գրությամբ տրամադրված տեղեկատվությամբ նշված պարզաբանումները: Այսպիսով Ընկերությունը, հաշվի առնելով ներկայացվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, որի համաձայն՝ Հանձնաժողովը վարչական վարույթ չի հարուցում, իսկ հարուցված վարույթը կարճում է, եթե բացակայում է վարչական իրավախախտումը, համարել է, որ իր գործողություններում բացակայում է

մեղքը Լիցենզիայի պահանջների (լիցենզիայի պայմանների 20-րդ և 25-րդ կետեր) հնարավոր խախտման մեջ և խնդրել է Հանձնաժողովին, հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, կարճել Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը,

ժզ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Լիցենզիայի պայմանների 20-րդ և 25-րդ կետերի պահանջները, այն է, Որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Ընկերության ներկայացրած՝ Հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 3-ի №393-Ա որոշմամբ նշված մինչև 10 խողովակ ունեցող մայրուղային խողովակաշարերի՝ «Վիվա Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից հայցվող խնդրո առարկա հատվածները մինչև 2024 թվականի սեպտեմբերի 28-ը սպառված լինելու վերաբերյալ տեղեկատվությամբ փաստվել է, որ նշված ժամկետում Որոշմամբ նշված՝ խնդրո առարկա խողովակաշարերում առկա են ամբողջությամբ ազատ (չսպառված) խողովակներ, ինչը դիտվում է որպես Ընկերության կողմից Հանձնաժողովին ոչ հավաստի տեղեկատվության ներկայացում, ինչն ամրագրված է նաև Որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետում:

Մասնավորապես, Որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Ընկերության ներկայացրած՝ Հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 3-ի №393-Ա որոշմամբ նշված մինչև 10 խողովակ ունեցող մայրուղային խողովակաշարերի՝ «Վիվա Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից հայցվող խնդրո առարկա հատվածները մինչև 2024 թվականի սեպտեմբերի 28-ը սպառված լինելու վերաբերյալ տեղեկատվությամբ նշվել է, որ Աջափնյակ վարչական շրջանում գտնվող հատվածներում առկա են ազատ խողովակներ, ինչը փաստվել է նաև Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2025 թվականի հուլիսի 17-ի №605-ԳՔ հրամանի համաձայն՝ 2025 թվականի հուլիսի 22-24-ը Հանձնաժողովի և Ընկերության աշխատակիցների համատեղ իրականացված՝ Ընկերության հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակաշարերի տեղազննման արդյունքներով: Միաժամանակ, տեղազննման արդյունքներով պարզվել է նաև, որ Որոշմամբ նշված՝ խնդրո առարկա մի շարք խողովակաշարերում (№136 և №137, №304/5, №501 դիտահորերում առկա համապատասխանաբար 8-ական, 3 և 4 խողովակներից ամբողջությամբ ազատ են երկուական, իսկ №523 դիտահորում առկա 6 խողովակներից՝ մեկը, որոնցից վնասված են №304/5 դիտահորում և №523 դիտահորում առկա՝ ազատ խողովակները) նույնպես առկա են ազատ խողովակներ:

Նշվածի առնչությամբ Ընկերության ներկայացրած պարզաբանումների (ներառյալ վարույթի շրջանակում) համաձայն՝ №304/5 և №523 դիտահորերում առկա՝ համապատասխանաբար 2 և 1 ազատ խողովակները վնասված են, իսկ №136 և №137 դիտահորերի միջև ընկած խողովակաշարի հատվածը, որն ավելի քան 3 տարի եղել է ավիրված, ինչպես նաև №501 և №502 դիտահորերի միջև ընկած խողովակաշարի բոլոր 4 վթարված խողովակները վերականգնվել են Ընկերության ենթակառուցվածքի վթարավերականգնողական աշխատանքների արդյունքում՝ 2025 թվականի հուլիս ամսին: Մինչդեռ, թե Որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն Ընկերության ներկայացրած տեղեկատվությամբ (պարզբանումներով), թե Հանձնաժողովի 2008 թվականի նոյեմբերի 5-ի №593-Ն որոշման համաձայն Ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացրած՝ 2024 թվականի 2-րդ և 2025 թվականի 1-ին կիսամյակների դրությամբ հանրային ամրակցված հեռախոսացանցի գծերի ենթակառուցվածքների գտնվելու վայրի և առկա թողունակության մասին տեղեկություններում տվյալ խողովակները նշվել են որպես զբաղեցված խողովակներ, և դրանց վթարված լինելու մասին նշումներ առկա չեն եղել: Ավելին, Որոշման 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն՝ Ընկերության կողմից օպտիկամանրաթելային ցանցի զարգացման ծրագիր-ժամանակացույցի վերաբերյալ Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվությամբ ցանցի կառուցման աշխատանքների վերջնաժամկետ է նշվել 2024 թվականի սեպտեմբերի 24-ը, սակայն Դավթաշեն համայնքում գտնվող №136 և №137 դիտահորերի միջև ընկած խողովակաշարի վնասված հատվածը, ինչպես նաև Աջափնյակ վարչական շրջանի Հալաբյան փողոցում գտնվող №501 և №502 դիտահորերի միջև ընկած խողովակաշարի վթարված խողովակները վերականգնվել են Ընկերության ենթակառուցվածքի վթարավերականգնողական աշխատանքների արդյունքում՝ միայն 2025 թվականի հուլիս ամսին (2024 թվականի սեպտեմբերի 28-ից հետո) և դրանցում առկա են երկուական ազատ (չսպառված) խողովակներ, իսկ №304/5 դիտահորում և №523 դիտահորում առկա՝ վնասված ազատ խողովակների մասով վթարավերականգնողական աշխատանքներ չեն իրականացվել և մինչև 2024 թվականի սեպտեմբերի 28-ը չեն սպառվել: Հատկանշական հանգամանք է նաև, այն որ ի տարբերություն նշված թվով 5 դիտահորերում առկա տվյալ խողովակների վերաբերյալ Հանձնաժողովի 2008 թվականի նոյեմբերի 5-ի №593-Ն որոշման համաձայն՝ Ընկերության կողմից 2024 թվականի սեպտեմբերի 28-ից հետո Հանձնաժողով ներկայացրած՝ 2024 թվականի 2-րդ և 2025 թվականի 1-ին կիսամյակների դրությամբ տեղեկությունների, ըստ որոնց այդ խողովակները նշվել են, որպես

զբաղեցված խողովակներ և դրանց վթարված լինելու մասին նշումներ առկա չեն եղել, Ընկերության կողմից 2024 թվականի 1-ին կիսամյակի դրությամբ հանրային ամրակցված հեռախոսացանցի գծերի ենթակառուցվածքների գտնվելու վայրի և առկա թողունակության մասին տեղեկություններում տվյալ դիտահորերի մասով եղել են ազատ խողովակների առկայության մասին նշումներ, ինչն ըստ էության արձանագրվել է նաև 2025 թվականի հուլիսի 22-24-ը Հանձնաժողովի և Ընկերության աշխատակիցների համատեղ իրականացրած՝ Ընկերության հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակաշարերի տեղազննման արդյունքներով: Համադրելով, տվյալ թվով 5 դիտահորերում առկա խողովակների վերաբերյալ Ընկերության պարզաբանումներով, հաշվետվություններով Հանձնաժողովին ներկայացրած վերը նշված տեղեկատվություններն ու տեղազննման արդյունքները, Հանձնաժողովը գտնում է, որ անկախ նշված դիտահորերում առկա ազատ խողովակների վթարված լինելու հանգամանքից, վթարավերականգնողական աշխատանքները պետք է իրականացվեին և խողովակների ազատ թողունակությունը Ընկերության կարիքների համար Որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ պետք է սպառվեր մինչև 2024 թվականի սեպտեմբերի 28-ը, ինչն Ընկերության կողմից չի կատարվել:

Աջափնյակ վարչական շրջանում գտնվող հատվածներում առկա ազատ խողովակների մասով Ընկերության ներկայացրած պարզաբանումների (ներառյալ վարույթի շրջանակում) առնչությամբ պետք է նշել, որ Որոշման 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն՝ Ընկերության կողմից դեռևս 2022 թվականի հուլիս ամսին Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվությամբ (օպտիկամանրաթելային ցանցի զարգացման ծրագիր-ժամանակացույց) Աջափնյակ վարչական շրջանում օպտիկամանրաթելային ցանցի կառուցման աշխատանքների վերջնաժամկետ է նշվել 2024 թվականի սեպտեմբերի 1-ը, սակայն վերջինս Աջափնյակ վարչական շրջանում ցանցի կառուցման համար անհրաժեշտ բաշխիչ պահարանների տեղադրման համար, անհրաժեշտ տեղազննությանը մասնակից ներկայացուցիչ տրամադրելու խնդրանքով Երևանի քաղաքապետարանին է դիմել միայն 2024 թվականի մարտի 28-ին, իսկ քաղաքապետարանը Ընկերության գրությանն արձագանքել է միայն 2024 թվականի օգոստոսի 28-ին, այն է՝ դիմումից մոտ 5 ամիս անց:

Ավելին, Ընկերությունը փաստելով, որ տեղազննությունների և համաձայնեցումների գործընթացը ժամանակատար է և այդ գործընթացի ավարտից հետո դրանց արդյունքների հիման վրա անհրաժեշտ նախագծերի կազմումն՝ ըստ Ընկերության

ներկայացրած տեղեկատվության պահանջել է ավելի քան 2 ամիս, հայցվող փաթեթի շինարարության թույլտվությունն էլ ավելի երկար ժամանակ՝ փաստացի ևս ավելի քան 4 ամիս, իսկ նշված գործընթացներից հետո (2025 թվականի մարտի 28-ից) մեկնարկած՝ Աջափնյակ վարչական շրջանում օպտիկամանրաթելային ցանցի կառուցումն էլ դեռևս ընթացքի մեջ է (շուրջ 6 ամիս), այդուհանդերձ, տվյալ հանգամանքների առկայութամբ Աջափնյակ վարչական շրջանում օպտիկամանրաթելային ցանցի կառուցման աշխատանքների իրականացման նպատակով վերջինս Երևանի քաղաքապետարանին է դիմել միայն 2024 թվականի մարտի 28-ին (մինչդեռ, կարող էր դիմել ավելի վաղ), իսկ քաղաքապետարանին հասցեագրված գրության պատասխանի հնարավորինս սեղմ ժամկետում ստացման ուղղությամբ որևէ գործողություն չի ձեռնարկել:

Նկատի ունենալով նշվածը, վարույթի շրջանակում Ընկերության կողմից ներկայացված պարզաբանումները չեն կարող հիմք հանդիսանալ Ընկերությանը պատասխանատվությունից ազատելու համար, քանի որ դրանցով որևէ կերպ չի հերքվել խախտումների առկայության հանգամանքը: Ընդ որում, ներկայացված պարզաբանումներով չի հիմնավորվել նաև, որ նշված խախտումը հետևանք է ֆորս մաժորի, այն է՝ առկա են եղել անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք առաջացել են իր կամքից անկախ, խոչընդոտել են իր գործունեությանը կամ հանգեցրել համապատասխան պարտավորությունների չկատարմանը՝ հակառակ իր գործադրած ջանքերի, այն պարագայում, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կարգավորվող անձի կողմից սույն օրենքով, Կարգավորողի իրավական ակտով սահմանված պահանջի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կարգավորողն իրավասու է կիրառելու նույն օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներ, վերականգնելու մինչև խախտումը եղած դրությունը, կատարելու դրանից բխող գործողություններ (այդ թվում՝ հաշվարկ, վերահաշվարկ և այլն), ինչպես նաև տալու դրանց կամ խախտումը վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ՝ հաշվի առնելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված առանձնահատկությունները:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում տարեկան հինգ հարյուր միլիոն դրամ գումարը գերազանցող շրջանառություն ունեցող կարգավորվող անձի կողմից Կարգավորողի իրավական ակտով սահմանված պահանջը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման, լիցենզիայի (թույլտվության) պայմանների կոպիտ խախտման, էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում կարգավորվող այլ անձի օրինական շահերի խախտման, կարգավորվող գործունեության խոչընդոտմանը, լիցենզիայի (թույլտվության) պայմանների չկատարմանը կամ նույն հոդվածի 8-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը առաջացնում է տուգանք՝ տասը միլիոն դրամից քսան միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի (թույլտվության) գործողության կասեցում կամ լիցենզիայի (թույլտվության) գործողության դադարեցում:

Միաժամանակ, հաշվի առնելով վարչական վարույթի շրջանակում հաստատված իրավախախտման բնույթը, այն է՝ Հանձնաժողովի իրավական ակտով սահմանված պահանջի (Որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Ընկերության ներկայացրած՝ Հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 3-ի №393-Ա որոշմամբ նշված մինչև 10 խողովակ ունեցող մայրուղային խողովակաշարերի՝ «Վիվա Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից հայցվող խնդրո առարկա հատվածները մինչև 2024 թվականի սեպտեմբերի 28-ը սպառված լինելու վերաբերյալ տեղեկատվությամբ փաստվել է, որ նշված ժամկետում Որոշմամբ նշված՝ խնդրո առարկա խողովակաշարերում առկա են ամբողջությամբ ազատ (չսպառված) խողովակներ, ինչը դիտվում է որպես Ընկերության կողմից Հանձնաժողովին ոչ հավաստի տեղեկատվության ներկայացում, ինչն ամրագրված է նաև Որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետում, որն էլ իր հերթին հանգեցրել է Լիցենզիայի պայմանների 20-րդ և 25-րդ կետերի խախտման) խախտման հանգամանքը, որի արդյունքում խախտվել էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում կարգավորվող այլ անձի (տվյալ դեպքում՝ «Վիվա Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության) օրինական շահը՝ Հանձնաժողովը գտնում է, որ հետագայում Ընկերության պատշաճ վարքագիծն ապահովելու և նշված խախտումների կրկնությունը բացառելու նպատակով վերոնշյալ խախտման համար որպես համաչափ պատասխանատվության միջոց անհրաժեշտ է կիրառել տասը միլիոն դրամ գումարի չափով տուգանք, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Լիցենզիայի պայմանների 20-րդ և 25-րդ կետերի խախտման համար Ընկերությանը տուգանել 10 000 000 (տասը միլիոն) դրամ գումարի չափով:
2. Ընկերությանը պարտավորեցնել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում սույն որոշման 1-ին կետով սահմանված գումարը №900005242319 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքի:
4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- ---------- 2025թ.